## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-20/7 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «12» մարտի 2020թ.

2020թ-ի փետրվարի 28-մարտի 12, ՀՀ, ք.Երևան, Մյասնիկյան 20 հասցեում գտնվող «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև ՀՈԱԿ) վարչական շենքում տեղի ունեցավ ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Ս. Զաքարյան | «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կենդանիների սննդի պատասխանատու-խոհարար, |
| Ա. Ասատուրյան | «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գլխավոր կենդանաբույժ, |
| Վ. Մարգարյան | «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գործավար-քարտուղար, |
| Հ. Մանասարյան | «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի հաշվապահ, |
| Լ. Չիլինգարյան | «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կենդանաբույժ, |
| Վ. Եսայան | «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գնումների համակարգող. |

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ս. Զաքարյանը, իսկ քարտուղարն էր՝ Վ. Եսայանը:

## ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:

3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

## 1. ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-20/7 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ս. Զաքարյանը նիստը հայտարարեց բացված հայտնեց որ գնումն իրականացվում է ՀՀ «գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|
| 1. | Համակցված կեր | 24000000 |
| 2. | Չոր կերեր շնազգիների և արջազգիների համար | 10000000 |

ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են ՀՀ, ք.Երևան, Մյասնիկյան 20 հասցեում գտնվող «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի վարչական շենքում, հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի փետրվարի 28-ին, ժամը «14:00»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն նե

րկայացվել:

ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Էլ. փոստ |
|---|---|---|---|
| 1 | ՖՈՏՈՆ ՍՊԸ | ք. Երեւան, Ռոստոմի 58 | ms.foton2014@mail.ru |
| 2 | Սամվել Ավագյան Սամվելի Ա/Ձ | ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Առինջ Զագավանքի 1/1 | ekomil001@gmail.com |
| 3 | «Փեթ Հաուս» ՍՊԸ | ք. Երեւան, Ղափանցյան 1/3 | info@pethouse.am |
| 4 | Լեբրոն ՍՊԸ | ք. Երեւան, Աջափնյակ 16 թաղ 47 | lebronarm@mail.ru |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Հայտերը կազմվել և ներկայացվել են ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
- Ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.,
- Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին., բացառությամբ

ՖՈՏՈՆ ՍՊԸ-ի՝ ներկայացված հայտում ներառված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերով սահմանված վավերապայմաններին, գնման առարկաների անվանումները սխալ են լրացված: Ֆոտոն ՍՊԸ-ի հայտը գնահատվեց անբավարար և մերժվեց:

Լեբրոն ՍՊԸ-ի՝ ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ համաձայն հավելված N 1.1-ի, 1-ին և 2-րդ չափաբաժնով առաջարկված գնման առարկայի նկարագրերը ներկայացված են ոչ լիարժեք՝ առաջարկվող ապրանքների մակնիշները լրացված չեն, իսկ ֆիրմային անվանման և ապրանքային նշանի փոխարեն ներկայացված են հրավերով նախատեսված գնման առարկայի անվանումները:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

| Չ/հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով նախատեսված գին | Մասնակցի | | | Մասնակիցների առաջարկած գները՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Զբաղեցրած տեղ | Ընտրված մասնակցի նշում՝ «X» | Անվանում | Արժեք | Ընդհանուր գին |
| 1* | Համակցված կեր | 24000000 | 1 | x | Լեբրոն ՍՊԸ | 4620000 | 5544000 |
| 2* | Չոր կերեր շնագգիների և արջագգիների համար | 10000000 | 1 | x | Սամվել Ավագյան Սամվելի Ա/Ձ | 9000000 | 9000000 |
| | | | 2 | | Լեբրոն ՍՊԸ | 7500000 | 9000000 |
| | | | 3 | | «Փեթ Հաուս» ՍՊԸ | 8333000 | 1000000 |

* վարվել են բանակցություններ՝ արդյունքները ներկայացված են ստորև

Որոշվեց՝

1. Հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Ֆոտոն ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել,
3. Քարտուղարին՝ ծանուցել Լեբրոն ՍՊԸ-ին առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձաժողովն արձանագրեց, որ Լեբրոն ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Որոշվեց՝

1. Սամվել Ավագյան Սամվելի Ա/Ձ-ի, Լեբրոն ՍՊԸ-ի, «Փեթ Հաուս» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

2. Նիստը կասեցնել գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նպատակով:

3. Քարտուղարին՝ ծանուցել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման մասին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ (գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա /բանակցություններ)՝ մասնակիցների հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գների նվազեցման նպատակով:

Բանակցությունների համար սահմանվեց ժամկետ՝ 30 րոպե տևողությամբ:

Բանակցությունների ընթացքում՝

Սամվել Ավագյան Սամվելի Ա/Ձ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով ներկայացվեց նոր նվազեցված առաջարկ՝ 5300000 ՀՀ դրամ,

Լեբրոն ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժն մասով ներկայացվեց նոր նվազեցված առաջարկ՝ 6480000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն,

«Փեթ Հաուս» ՍՊԸ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով ներկայացվեց նոր նվազեցված առաջարկներ՝ 6720000 ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն,

Այլ առաջարկներ չեն ներկայացվել:

## 1. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հանձնաժողովն արձանագրեց իր կողմից պատճառաբանված որոշման բացակայությունը՝ Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը ստուգելու:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված /և հաջորդաբար տեղեր զբաղեցրած/ մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

## 2. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ս. Զաքարյան

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ասատուրյան

Վ. Մարգարյան

Հ. Մանասարյան

Լ. Չիլինգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Եսայան